Յունվարի 9-ին հանգուցեալի մարմինը հանդիսաւոր կերպով դուրս բերեցին „Լօնդօն“ հիւրանոցից և դրեցին վանքի մայրեկեղեցին։ Յունվարի 11-ին կատարվեց նրա թաղումը ամենահանդիսաւոր կերպով։ Թաղման ամբողջ ժամանակ, թէ եկեղեցում և թէ դուրս ներկայ էր Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան փոխարքան իր երկու որդիներով։ Ոչ թէ միայն հայ հասարակութիւնը, բայց և ամբողջ քաղաքը՝ մարդիկ, կանայք, երեխաներ լցնում էին եկեղեցին, նրա գաւիթը և բոլոր շրջակայ փողոցները։ Ասեղ գցելու տեղ չը կար։ Պատարագիչը սրբազան Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանն էր և Թիֆլիսի հայոց ամբողջ հոգևորականութիւնը պարտաւորութիւն համարեց վերջին պարտքը տալ քահանայի—որդու—զինուորի յիշատակին։

Թաղմանը ներկայ էին տեղական իշխանութեան ամենաբարձր ներկայացուցիչները, ռուսադաւան հոգևորականներից ոմանք և մահմեդական հոգևորականներից մի քանիսներ։

Եկեղեցուց մինչև գերեզմանը դագաղը տանում էին գեներալներ։ Դա այն հանդիսաւոր րոպէն էր, երբ եկեղեցու զանգակների ձայնը և թնդանօթների թնդիւնը միախառնվում էին զինուորական երաժշտութեան և հոգևորականների երգեցողութեան հետ։

Հանգուցեալի գերեզմանի վրա դրվեցան երկու պսակներ. մինը քաղաքի կողմից, իսկ միւսը ալաշկերտցի գաղթականների կողմից։

Վերջին պատերազմի մէջ յայտնված ամենանշանաւոր գեներալներից չորսը ամենակարճ ժամանակում մահվան զոհ դարձան։ Սրանք են. Բէհբութ Շելկօվնիկօվ, Յովհաննէս Լօրիս-Մէլիքօվ, Յովհաննէս Լազարեվ և ահա այժմ Արշակ Տէր-Գուկասօվ։ Բայց չը նայելով այդ մեծ կորուստներին, մենք հայերս կարող ենք հաստատապէս յուսալ որ հայոց ազգային հանճարը, որ իր ամեն հասարակական դասակարգերից միշտ ծնեցնում՝ էր ընդունակ զօրապետներին, դարձեալ չի սպառվի և առաջվայ պէս կը շարունակի ընծայել պետութեանը տաղանդաւոր և քաջ զօրապետներին։

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Դեկտեմբերի 13-ին 80

Յառաջիկայ 1881 թ. յունվար ամսից սկսվելու է այստեղ վաղուց սպասած հանգանակութիւնը յօգուտ սովեալների։ Պէտք է յուսալ, որ Մոսկվայի հայ հասարակութիւնը իր սովորական ազգասիրութեամբ կը վերաբերվի դէպի այս բարոյական պարտքը և առատ ու զգալի միջոց կը տայ իր թշուառ տաճկահայ եղբայրներին մրցելու այնպիսի մի անագորոյն թշնամու հետ՝ ինչպէս սովն է, որ ահա երկրորդ տարին սպառնում է բնաջինջ անել Վասպուրականի և Տարօնի բնակիչներին։ Պէտք է յուսալ, կրկնում ենք, որ թէ մեծ. Յ. Անանեանցը՝ իր յարգելի բարեկամներով և թէ արժան. Հ. Սուքէնեանցը՝ ինչպէս և միշտ—հանգանակութեան սկզբնաւորողը կը լինեն և ոչինչ խնայելու չեն այդ հանգանակութեան յաջողութեանը նպաստելու։

Դուրս եկաւ այստեղ և բաժանվեցաւ անդամներին Թիֆլիսում լինելի Հնագիտական V ժողովի պրօգրամմը և կանոնները։ Ժողովը կը սկսվի 8-ից սեպտեմբերի 1881 թ. և կը տևէ ոչ աւելի քան երեք շաբաթ։ Սեպտեմբերի 1-ին կը հաւաքվի ժողովի խորհուրդը (совѣтъ съѣзда), նախապատրաստական յանձնաժողովի անդամներից բաղկացած։—Ժողովի անդամ կարող է լինել իւրաքանչիւր մարդ, որ ցանկութիւն է յայտնել մասնակցելու ժողովի նիստերին և նախապէս վճարել է 3 ր. 60 կ.։

Այս անձանց կը տրուեն անդամական տոմսեր և առանձին նշաններ, որով նրանք կարող են միշտ մուտք ունենալ ժողովի նիստերին։—Ժողովի մէջ լինելու է հանդէս (выставка) հնագիտական իրեղէնների։ Նիստերի ընթերցմունքը և վիճաբանութիւնները լինելու են միայն ռուսերէն լեզուով. իսկ օտարազգի գիտնականաց ընթերցմունքը կարող է լինել ֆրանսերէն և գերմաներէն, այն էլ դրա համար առանձին նշանակած նիստերին։—Ժողովի պարապմանց պրօգրամմը բաղկանում է 8 բաժնից. 1) Նախնական յիշատակարաններ, 2) կռապաշտական և կլասիքական յիշատակարաններ, 3) քրիստոնէական յիշատակարաններ, 4) մահմեդական յիշատակարաններ, 5) արուեստից և ճարտարապետութեան յիշատակարաններ. 6) դրագիտութեան և լեզուի յիշատակարաններ, 7) լեզուագիտութիւն (лингвистика), 8) պատմական աշխարհագրութիւն և ազգաբանութիւն (էտնօգրաֆիա)։

Լսում ենք, որ գալոց տարի մեր գաւառական քաղաքներից մէկում հրատարակվելու է մի մանկավարժական օրագիր. բարի սահաթին լինի. միայն խորհուրդ կը տայինք թերթի խմբագրին զգոյշ լինել այն սխալներից, որոնք մի տարին էլ չը լրացած՝ գերեզման թաղեցին խեղճ «Մանկավարժական թերթը»։ Մի ուրիշ անգամ կաշխատենք «Մշակի» էջերում ցոյց տալ յիշեալ սխալները և այն ուղղութիւնը, որին՝ մեր կարծիքով՝ պէտք է հետևի իւրաքանչիւր օրագիր ուսման և կրթութեան գործին օգտաւէտ ծառայութիւն մատուցանելու համար։

Թիֆլիսի գրքեր հրատարակելու ընկերութիւնը պատրաստում է տպագրելու Մոսկվայում մեր յայտնի բանաստեղծ՝ Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւնները—առանձին գրքով։ Հրատարակութիւնը լինելու է բաւականին շքեղ. տիպը մաքուր, թուղթը գերազանց և գրքի սկզբին հեղինակի պատկերը։ Տպագրվելու է մօտ 3000 օրինակ, ուստի՝ երևի թէ, գրքի գինը կը լինի ձեռնտու, որ շատ հարկաւոր է։ Պէտք է կարծել, որ մեր բանաստեղծի գրքոյկը մեծ տարածութիւն է ունենալու ժողովրդի մէջ, այն բանաստեղծի, որ 25 տարի շարունակ երգում է հայի ցաւերը և նրա իղձերը...

Առաջիկայ հնագիտական ժողովի համար (որ լինելու է Թիֆլիսում) Մոսկվայի համալսարանի երիտասարդ պրօֆէսսոր պ. Միլլերը՝ ի թիւս այլ աշխատութեանց, պատրաստում է մի ստուար ժողովածու Օսերէն առակների, հէքաթների և այլ զանազան ժողովրդական աւանդութիւնների, որոնց նա հաւաքել է անցեալ ամառ՝ իր Օսէթիա արած ճանապարհորդութեան ժամանակ։ Պ. պրօֆեսսորը արդէն թարգմանել է նրանց ռուսերէն և պատրաստում է տպելու։—Զարմանալի բան է, որ մինչև այսօր ոչինչ չիմացանք. արդեօք Կովկասի կրթեալ հայ երիտասարդները ունի՞ն ներկայացնելու եկող հնագիտական ժողովին որ և է աշխատութիւն. արդեօք կա՞ն անձինք, որոնք պարապելիս լինէին ժողովրդական գրականութիւնով և հաւաքէին հէքաթներ, առասպելներ, երգեր և այլն, որոնք մեծ նշանակութիւն կարող են ունենալ հայոց անմիջակ դիցաբանութեան, սակաւ քննած լեզուի ու պատմութեան համար։ Մինչև անգամ—որքան յիշում ենք—ոչ մի մասնագիտական յօդուած դուրս չեկաւ մեր օրագրութեան մէջ այդ առարկայի վերաբերմամբ։ Աններելի՜ անփութութիւն։ Մինչդեռ Թիֆլիսի Հնագիտական ժողովի պրօգրամի 86-որդ հարցը առանձին ուշադրութիւն է դարձնում հայոց ժողովրդական գրականութեան վրա այս խօսքերով. «Հարկաւոր է ժողովել հայոց հէքաթներ, նախապաշարմունքներ, առասպելներ և ամենայն տեսակ ժողովրդական աւանդութիւններ»։— Յայտնի բան է այստեղ խօսքը ուսումնական քննութիւնների ու հետազօտութիւնների վրա չէ. ամենագլխաւորը—նիւթն է. պէտք է նիւթ ժողովել, նիւթ. և որքան շատ, այնքան լաւ։ Ցանկալի էր որ մեր երիտասարդները ուշադրութիւն դարձնէին այս նկատողութեան վրա և աշխատէին ժողովածուներ պատրաստել, որով մեծ ծառայութիւն արած կը լինէին թէ հայոց լեզուի ու պատմութեան ուսումնասիրութեանը և թէ ընդհանրապէս—գիտութեանը։—Իբրև օրինակ այդպիսի ժողովածուի—առ այժմ կարող ենք ցոյց տալ քանքարաւոր Գարեգին վարդ. Սրուանձտեանցի պատուական աշխատութիւններ— «Գրոց ու բրոց» և «Մանանայ»։

Գր. Խ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Թիֆլիսի հետևեալ անձինքներից 4 ր. 20 կ. յօգուտ Վասպուրականի սովեալների. Ա. Դուլուխանեանց 1 ր. 20 կ., Փ. Խանտամիրեանց 3 ր.։

Թիֆլիսաբնակ պ. Արշակ Պետրոսեան ուղարկել է մեզ 6 ր. 50 կ., որ նա հաւաքել է հետևեալ անձինքներից. Գ. Պետրոսեանց 1 ր., Մ. Կիւրեղեանց 1 ր., Ն. Պապեանց 1 ր., Ոմն 50 կ., Ոմն 50 կ., Ոմն 50 կ., Այվազ Դաւթեանց 50 կ., Ի. Բաջիեվ 50 կ., և ինքն Արշակ Պետրոսեանց 1 րուբլ։

Ստացանք Վաղարշապատից պ. Մ. Տէր-Պետրոսեանցից 10 րուբլ յօգուտ Վանի սովատանջների, որ նուիրել է Արիստակէս վարդապետ Սեդրակեանց և 5 րուբլ յօգուտ Միացեալ Ընկերութեան, որ իրան պ. Տէր-Պետրոսեանցի տարեկան վճարն է յօգուտ յիշեալ ընկերութեան։

Բաց արէք լրագրիդ № 24, կարդացէք «Նալչաքար Դարչօ»-ի նամակը պ. Գ. Արծրունու անձնաւորութեան վերաբերեալ. Մի՞թէ ուզում էք, որ աւելի կեղտոտ օրինակներ ցոյց տանք լրագրիդ մէջ։

Բաց արէք լրագրիդ № 11, կարդացէք ձեր համամիտ աշխատակից Յ. Վ. Մ—ի հետևեալ խօսքերը.

«...Յարգելի քահանան (Տ. Սարգիս Ա.) հինգ տարուայ ընդհատումից յետոյ՝ միայն անցեալ տարուանից նորից սկսեց շարունակել Վաղարշապատի օրիորդական ուսումնարանում աւարտած մի օրիորդի իբրև վարժուհի հրաւիրելով... (այս կէտերը դրել է ինքն յօդուածագիրը)։ Մեր կարծիքով մինչդեռ հայերը այս դրութեան մէջն ենք, օրիորդ վարժուհի պահելը մի տեսակ յանցանք է (!! ինչ է ուզում ասել պ. Յ.Վ.Մ. ուզում է արդեօք ասել, որ մինչդեռ հայերի հոգևորականները անբարոյական անձինք են, մեր հոգևոր դպրոցներում օրիորդ վարժուհի պահել անկարելի է, թէ ինչ...). լաւ կը լինէր եթէ այդպիսիները ամուսնացած լինէին, որով ազատուած կը լինէին ամբոխի վայր ի վերոյ բամբասանքից»։

Առաջին բամբասողը, օրիորդ վարժուհուս պատուի առաջին շօշափողը դուք էք, պ. Յ.Վ.Մ., որ այդ էք ասում. դուք ինքներդ փոքր ինչ վերև կարծես չէք ուզում հաւատալ, որ Տ. Տէր-Սարգիսը օրիորդին, իբրև վարժուհի է հրաւիրել և կէտեր էք դնում այդ տեղ...»

Դարձեալ փաստեր էք ուզում, պ. Պապաջանեանց.

Բայց՝ զորն ասեմ, կամ զորն խոստովանիմ...

* * *

Ձեզ, պ. Պապաջանեանց, գեղեցիկ պրօգրամ էին տուել Մօսկվայի ինն հայ ուսանողները (№ 1) կամ աւելի ճիշտ է ասել՝ նրանք ենթադրել էին, որ ձեր ուղղութիւնը նրանց ցոյց տուած պրօգրամմային պէտք է համապատասխանէք, բայց... բայց դուք վերջիվերջոյ հասաք այն աստիճանի անամօթութեան, որ հրապարակօրէն խոստովանեցիք թէ՝ ձեզ համար աւելի յարմար է օգուտ քաղել մի գերմանական առածից՝ «Sprechen ist Silber, Sweigen ist Gold» (Ասելն արծաթ է, լռելն ոսկի է) (№ 37)։ Այդ խօսքերին, պ. Պապաջանեան, աւելացրէք նոյնպէս. «Schmeicheln ist Diamant» (Շողոքորթել-դիամանտ է), «Նպաստը արդարացնում է միջոցները» և համարձակ ընդունեցէք իբրև լրագրիդ՝ նշանաբան.... Ի հարկէ ձեզ համար շատ յարմար էր լռել և չը շարունակել բացատրել ձեր առաջնորդող յօդուածի միտքը. մենք համաձայն ենք ձեզ հետ, որ ձեզ համար այդ դէպքում լռելն—ոսկի էր։ Դուք եթէ շարունակէիք sprechen, հաւանութեամբ կարող էիք զրկվել ձեզ նոր տարվայ հասանելի 2000 ր. տարեկան ռոճիկից... Ի հարկէ տարեկան 2000 ր. ոսկի է....

Ահա մեր ղեկավարների ուղղութիւնը, ընթերցող, ահա մեր հրապարակախօսները...

Ձեզ, պ. Պապաջանեանց, ասում ենք մենք, ցոյց էր տուած՝ թէ ինչ հարցերով պէտք է զբաղվի մի գաւառական թերթ, իսկ դուք ինչ հարցեր յարուցիք....

Դուք ձեր առաջնորդող յօդուածներում (օր. № 27) մեզ նկարագրեցիք հասարակական գործիչների «սեղմած գլուխները», «երկար քթերը», «խոր. աչքերը»...

Մի երկու հարց, որ դուք յարուցել էք լրագրիդ մէջ համարեա ամբողջ տարվայ ընթացքում, վաղուց ծամել էր գաւառացիների համար «Մշակը». վերցրէք օրինակ՝ հացի չտեմարանի հարցը և այլն, մինչև անգամ հոգևորականներին ռոճիկ նշանակելու հարցը (№ 33), որի համար դուք շնորհակալութիւններ էք ստացել (№ 34)։

* * *

Դուք, պ. Պապաջանեանց, չէք ամաչում հաստատել, որ «Մշակի» աշխատակիցները «Թոկից փախածներ» են (№ 32)։ Ձեր այդ (չը գիտեմ ինչպէս անուանեմ՝ սրութիւնները թէ յիմարութիւնները) «Մեղու Հայաստանին» էլ շատ է հաւանել և ձեզ հետ միասին կրկնում է... Ողորմելիք...

«Մշակի» աշխատակից պ. Գաղեանցը ձեզ համար խօ ամենայիմար երեխայ է դարձել....

Պարոն Պապաջանեանց։ Մոռացե՞լ էք արդեօք ձեր այն մանաւոր նամակը, որ գրել էիք տարուայ սկզբում Մոսկվա պ. Համ. Առաքելեանցին։ Մոռացե՞լ էք արդեօք, որ դուք աղաչում էիք «Մշակի» աշխատակիցներին՝ Առաքելեանցին և Գաղեանցին աշխատակցել ձեր լրագրին։ Ձեր խօսքերը չե՞ն արդեօք.

«... Մանաւանդ ձեր (Առաքելեանցի) և Գաղեանցի պարտաւորութիւնն է ինձ օգնելու. օգնեցէք, մնամ եմ...»

Ասացէք, պ. Պապաջանեանց, այս ձեր խօսքերը չե՞ն։ Պ. Առաքելեանցը ստացած նամակները ոչնչացնելու սովորութիւն չունի. ես համոզուած եմ, որ եթէ հարկաւորվի նա կարող է իսկականի հետ ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին։ Մոսկվայում ես հանդիպել եմ մինչև 7—8 հայ ուսանողների, որոնք անձամբ տեսել են ձեր այդ նամակը, այն ուսանողներն ես կարող են հաստատել ասածս։

Ուրեմն, պ. Պապաջանեանց, երբ «Մշակի» աշխատակիցները, տեսնելով ձեր լրագրի ուղղութիւնը հինգ առաջին համարից, արհամարհեցին լրագիրդ և ձեր առաջարկութիւնը, որի պատասխանն էր խորին լռութիւն և այժմ նրանցից մէկը, պ. Գաղեանցը, սկսեց յարձակվել ձեր դէմ, «Պսակ»-ը սկսում է նրան և ուրիշներին յիշոցներ տալ...

Անձնական կիրք չէ՞ դա, ապա ինչ է...

* * *

Վերջացնելով յօդուածս, չենք կարող դարձեալ ներողութիւն չը խնդրել «Մշակի» ընթերցողներից, որ այսքան երկար խօսեցինք «Պսակ»-ի պէս մի լրագրի վրա։ Եթէ «Պսակ»-ը կէտ առ կէտ քննելու լինէինք, շատ և շատ անգամ աւելի պէտք է գրէինք, քան թէ ինքն «Պսակն» է։

Մենք ոչինչ չասեցինք «Պսակի» մէջ տպած երկար յօդուածի մասին «Երևանի նահանգի բուսականութիւնը», որը դեռ շարունակվում է։ *) Այսքան միայն կասենք, որ այդ տեսակ գրուածքների տեղը չէ մի շաբաթական գաւառական փոքրիկ լրագիր։ Այդպիսի աշխատութիւնները ցանկալի է տեսնել առանձին գրքով տպագրած։

Ոչինչ չասեցինք նոյնպէս մի-երկու փոքրիկ չնչին և աննշան պատկերների մասին։

Ահա, ընթերցող, մեր գաւառական մամուլը...

Դառնալով դէպի պ. Վ. Պապաջանեանցը, աւելորդ չենք համարում նկատել նրան, որ հայ հասարակութիւնը փոքր ի շատէ զարգացել է, որ նա չէ կարող չը զզուել այդ տեսակ լրագրներից։ Այդպիսի լրագրի հրատարակութիւնը նրա անպատւութիւնն է...

—

Ես խօսեցի ամեն մի քայլափոխում նոյն իսկ «Պսակի» վրա հիմնվելով, բայց համոզված եմ, որ «Պսակ»-ի յիշոցներից ազատ մնալու չեմ։ Ես կը լռեմ և երկրորդ տարվայ վերջը, եթէ թէ ես և թէ «Պսակ»-ը կենդանի կը մնանք, դարձեալ մի հայեացք կը ձգեմ «Պսակ» լրագրի երկրորդ ամբողջ տարուայ հրատարակութեան վրա։

Մոսկ. դեկտ. 80 Միրզա

---

*) Այդ յօդուածը արդէն վերջացած է № 38-ում։ Երևի, պ. յօդուածագիրը չէր ստացել այդ համարը յօդուած գրելու ժամանակ։

Ծան. Խմբ.